ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3628-Ա « 23 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի Հ.3301-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 07.07.2026թ. հ.20-Ել-126201 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Կարինե Սարգսյանի 24.03.2025թ. հ.Դ-30949-25 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 16-ի «Կենտրոն համայնքի Նորագյուղ հ.338/1 բնակելի տան նկատմամբ Գառնիկ, Գևորգ, Լևոն Գրիգորյանների և Կարինե Սարգսյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.3301-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վերականգնել ք.Երևան, Կենտրոն, Նորագյուղ հ.338/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գառնիկ Հրանդի Գրիգորյանի, Գևորգ Գառնիկի Գրիգորյանի, Լևոն Գառնիկի Գրիգորյանի և Կարինե Վարանցովի Սարգսյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 54.95քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 54.95քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:».

2) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով, հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա, Երևան քաղաքի Նորագյուղ հ.338/1 հասցեում գտնվող 54.95 քառ.մետր մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները սահմանել բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման:»:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ